



ՀՀ Արմավիրի մարզի մարզպետ
Համբարձում Մաթևոսյանին

ՀՀ քաղաքացի՝ Մանե Աբրահամյանից
(Էլ-փոստ maneabrahamyan89@gmail.com
Հեռ. 094 52 34 69)

Հ Ա Ր Ց Ո Ւ Մ

Հարգելի պարոն Մաթևոսյան

համաձայն 2015թ. փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 51-րդ հոդվածի և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ և 9-րդ հոդվածների՝ խնդրում եմ ինձ տրամադրել տեղեկություններ հետևյալ հարցերի մասին:

1. Խնդրում եմ տրամադրել Եղեգնուտ համայնքի 2018, 2019, 2020 և 2021 թվականներին հաստատված համայնքի բյուջեն և բյուջեի կատարողականը (առանձին, ըստ տարիների):
2. Խնդրում եմ պատասխանել՝ ո՞վ է տնօրինում Եղեգնուտ համայնքի բյուջեն:

Խնդրում եմ տեղեկություն ստանալու հարցումիս պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում: Խնդրում եմ ծանուցումը ուղարկել էլեկտրոնային տարբերակով: (Պատրաստ եմ վճարել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված սահմանաչափը գերազանցող տեղեկության տրամադրման համար):

Հարգանքով՝ Մանե Աբրահամյան

25 հուլիս 2021թ.

Հանրային լրագրության ակումբի մասին

Հանրային լրագրության ակումբը Հայաստանում գրանցված հասարակական կազմակերպություն է: Մեր առաքելությունն է՝ խթանել խոսքի ազատությունը, բազմազանությունը և բազմակարծությունը Հայաստանում՝ զարգացնելով մասնակցային և հանրային թղթակցությունը, քաղաքացիական թղթակցիցներին և պրոֆեսիոնալ լրագրողներին, լրատվամիջոցներին ու սոցիալական մեդիայի մասնագետներին, տեղեկատվական տեխնոլոգիաների և հասարակական այլ ոլորտների մասնագետներին կապող համագործակցության գրավիչ, աշխատանքային կամուրջներ ստեղծելով: